



ԿԱՐՔ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

● Որպես կինոսիրող առաջին քայլն անգամ կատարելիս, խորհեցե՛ք: Անմտորեն կադր կադրի ետևից նկարելը՝ նյութի, ժամանակի և ուժերի աննպատակ վատնում է:

● Նկարահանումից առաջ ուսուլասիրեք այն ամենը, ինչ մտադիր եք նկարահանել: Այլապես կափսոսաք ապարդյուն կատարած աշխատանքի համար:

● Սցենար գրելը՝ կինոարվեստի առաջին հատվածն է, ֆիլմի նկարահանումը՝ երկրորդ, մոնտաժը՝ երրորդ հատվածը: Այս երեք հատվածների լծակները ձեռքում ամուր պահելով միայն կարելի է կինոֆիլմը հասցնել բարեհաջող ավարտի:

● Պետք է կարողանալ տեսնել ու նկարահանել սկզբում ծրագրվածից ավելի, և երբեք չպետք է հանգստանալ, քանի դեռ չի իրագործված ողջ մտահղացումը: Սա կինոարվեստի առաջին և հիմնական օրենքն է:

● Նկարահանված կինոժապավենը՝ դեռևս ֆիլմ չէ: Այն պետք է ընտրել և մոնտաժել: Ընտրել՝ նշանակում է դեն նետել չհաջողվածը՝ տեխնիկապես խոտանը, գեղարվեստորեն ոչ լիարժեքը, ինչպես նաև ավելորդը, եթե նույնիսկ ստեղծագործական և տեխնիկական իմաստով լավորակ է:

Ինչ բան է ավելորդը: Այն բոլորը, ինչ խանգարում է նկարահանվող կինոֆիլմի ներդաշնակությանն ու պարզությանը:

● Երկու կերպ կարելի է նայել կյանքին. տեսնել միայն նրա ընդհանուր ուրվագծերը կամ զննել ու գտնել նրա գեղեցիկ մանրամասները:

Կինոն կյանքը դիտող արվեստ է: Այն օբյեկտիվը, որը չի տեսնում մանրամասները, կույր է:

● Անպլան նկարահանումը գայթակիչ է, բայց վրեժխնդիր: Նման նկարահանման հետևանքով առանձին պլանները՝ շենքը, քաղաքը, գետը, ընկերը, վեր են ածվում կինոշիլափլավի. և գեղարվեստական ստեղծագործության փոխարեն ստացվում է անշնորհք կինոթխվածք:

● Հիշեցե՛ք: Նույնիսկ ձեր երեխային նկարահանելիս, դուք նրան պետք է նայեք կինոպերատորի և ռեժիսորի աչքերով:



ԵՂԻՆՋԸ ԵՎ ՖՈՍՖՈՐԸ

Լայն տարածված կարծիք է. այնտեղ որ եղինջ է աճում, հողը լավ բերք է տալիս: Այս ստորիվ գոյություն ունեն տարբեր տեսություններ:

Գոկտոր Պիգոտան (Քեմբրիջի համալսարան), օրինակ, ապացուցում է, որ եղինջն աճում է ֆոսֆորով առանձնապես հարուստ հողերում: Բանն այն է, որ ամենուրեք, որ բնակվում է մարդը և կան տնային կենդանի-

ներ, կուտակվում են ամեն տեսակ քափուկներ, որոնք խառնվում են հողին և երկար ժամանակ, երբ տվյալ տեղամասը լվվում է մարդու կողմից, հողը մնում է ֆոսֆորով հարուստ: Ֆոսֆորն, ըստ Էրեույքին, հողում կարող է պան-պանվել անառնման երկար, քանի որ ֆոսֆորի մեծ կուտակումներ են նկատվել այն վայրերում, որտեղ գտնվել են հոռմեացիների նամբարները, քանի որ դարի բնակավայրերը:

Սակայն եղինջը միայն մարդու ուղեկիցը չէ: Այն կարող է աճել նաև այն հողակտորներում, որտեղ ֆոսֆորի կոնցենտրացիան բնական պրոցեսների շնորհիվ մեծացած է: Այսպիսով, եղինջը հողում ֆոսֆորի բարձր պարունակության ինդիկատոր է:

● Սիրեք մեր հիանալի իրականության առօրյա երևույթները, բայց հնարամիտ եղեք նաև տոնական և հանդիսավոր օրերը նկարահանելիս: Վատն է այն կինոսիրողը, որը տոնակատարությունը նկարահանելիս սահմանափակվում է միայն հանդիսավոր նիստով:

● Գիտության մեջ կինոնպարատը կարող է ոչ միայն նվաճումների արձանագրող լինել, այլև ներառվել երևույթների հետապոստման մեջ:

Գիտական տեսակետից խիստ արժեքավոր դրև է փորձի կինոօրագիրը կարող է շատ բան պատմել հենց իր՝ գիտնականի և նրա աշխատանքային ընկերների մասին: Ի տարբերություն պրոֆեսիոնալ կինոյի, որը մասսայականացնելու նպատակով նկարահանում է միայն գիտական նյութը, գիտության մասին կինոսիրողի ֆիլմը կարող է լայն տեղ հատկացնել անձնական խորհրդողածություններին, լիրիկական զեղումներին և այլն: Որքան անհատական է կինոսիրողի ֆիլմը գիտության մասին, այնքան արժեքավոր է այն:

● Այն կինոսիրողը, որը ցանկացած տեղում անկարող է նկարահանման նյութ գտնել, նա այն չի գտնի ոչ մի տեղ:



Մի շատ պահված կինոսիրող սցենարական պլանով ստեղծել է ֆիլմ՝ «Կյանքը կանգառում», որը հյուսված է տրոյեյբուս նստելու պատկերներից: Նա նկարահանել է միայն աշխատանքի գնալիս և վերադառնալիս: Նկարահանված նյութից ստացվել է լուրատեսակ մի ֆիլմ, որտեղ կան թե՛ կոմիկական պատկերներ (տրոյեյբուսից ուշացողներ), թե՛ դրամատիկ պատկերներ (կանգառում գծավողներ), ինչպես նաև սկիզբ առնող տրոյեյբուսային սիրավեպի լիրիկա: Կարևորն այն է, որ նա կարողացել է նկարահանել շրջապատից աննկատ, առանց խանգարելու չլանքի սովորական ընթացքը:

